ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«4» նոյեմբերի 2024 թվականի N: 533-Ա քաղաք Գյումրի

«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի թվով 20 մանկապարտեզներին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար 01.08.2024 թվականին հայտարարվել է «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ 24/11» ծածկագրով մրցույթ: «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը վերոգրյալ մրցույթի 1-ին չափաբաժնի (Էլեկտրոնային դաշնամուրներ) մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

2024 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի և «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի միջև կնքվել է «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ 24/11»-1 պայմանագիրը: Սակայն «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի 2024 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ղեկավարին ուղղված N 28 գրությամբ տնօրենը խնդրել է լուծարել պայմանագիրը ֆինանսական խնդիրների պատճառով:

2024 թվականի հոկտեմբերի 25-ին ֆինանսների նախարարության գնումների համակարգում հրապարակվել է պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը:

Պայմանագրի և որակավորման ապահովումների մեր կողմից ներկայացված պահանջը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 2024 թվականի հոկտեմբերի 30-ի N 1221-11112 գրությամբ մերժվել է բանկում սպասարկվող «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի հաշվին միջոցների անբավարարության պատճառով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ առկա են «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) և բ) պարբերություններով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Կապիտալ գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ
(փոխարինող)

Իսկականի հետ ճիշտ է